Նոյն օրը Թիֆլիսից ստացուեց և գոր. Օղիշելիձէի հեռագրական հրամանը՝ «ընդունելու Թիւրքերի պայմանները և դադարեցնելու պատերազմական գործողութիւնները՝ համաձայն այդ պայմանների»։ Այս հրամանը հաւասար էր բացարձակ անձնատուութեան, որովհետև բերդի ամրութիւններից 2 վերստի վրա կեցած, այն էլ բարոյալքուած ու դադաղած զօրքը անկարող պիտի լինէր պաշտպանուել թշնամուց, և Կարսը, բոլոր զօրքերով ու ժողովրդով, պիտի անցնէր Թիւրքերի ձեռքը։ Այդ պատճառով, հայկական հրամանատարութիւնը նորից փորձեց գինադադարի աւելի նպաստաւոր պայմաններ ստանալու։

Ապր. 11–ին և 12–ին կռիւները շարունակուեցին անընդհատ։ Թիւրք զօրամասերն ու քրդական հրոսախմբերը աշխատում էին կտրել դէպի հիւսիս տանող երկաթուղին ու խճուղին և անվերջ յարձակումներ էին գործում հայկական զօրքերի վրա։ Թնդանօթները գոռում էին բերդի ամրութիւններից։ Հայ զօրքը ցոյց էր տալիս կատաղի դիմադրութիւն։ Իսկ նոյն այդ ժամանակ հայերի բանագնաց գնդ. Մորելը իրար յետևից գնում–գալիս էր Թիւրքական հրամանատարի մօտ, բանակցութիւններ վարում Կարսի յանձնումի պայմանների մասին։ Թիւրք զօրքերի հրամանատար Քեազիմ բէյը Վեհիբ փաշայի կողմից դրեց ու մինչև վերջն էլ պնդեց հետեւեալ երեք պայմանի վրա. 1. Մինչև ապր. 12–ի կէսօրը Թիւրքերին յանձնել Կարս գետի ձախ ափին գտնուող բերդային ամրութիւնները, իսկ մնացեալ ամրութիւնները յանձնել մինչև նոյն օրւայ երեկոն։ 2. Ապրիլ 12–ի ընթացքին անդրկովկասեան զօրքերը պէտք է հեռանան Կարսից։ 3. Բերդից դուրս գալուց յետոյ, 3 օրւայ ընթացքում, այդ զօրքերը պէտք է անցնեն Ախուրեան գետի միւս ափը։

Գնդ. Մորելը պնդում էր պայմանաժամի երկարաձգման վրա, բայց Թիւրքերը մնացին մինչև վերջ անզիջող և սպառնում էին, որոշեալ ժամանակը լրանալուց յետոյ, բերդը գրաւել զէնքի ուժով։ Միւս կողմից էլ Թիֆլիսի կառավարութիւնն էր շտապեցնում Թիւրքական պայմանների ընդունումը. ապրիլ 11–ի գիշերը գոր. Նազարբէգեանը ստացաւ ընդհանուր հրամանատարի հետեւեալ հեռագրական կարգադրութիւնը, թէ՝ քանի որ Կարսի «պարպման խնդիրը բացարձակ կերպով որոշուած է կառավարութեան կողմից, հրամայում եմ ձեզ իրաւունք տալ բերդապետին զօրքերը փոխադրելու Ալեքսանդրապոլի կողմը»։

Այս հեռագրի վրա, հայկական հրամանատարութիւնը մի անգամ էլ — չորրորդ անգամ — ուղարկեց գնդ. Մորելին Թիւրք հրամանատարի մօտ՝ խնդրելով պայմանաժամը դէթ մէկ օրով երկարաձգել։ Պատասխանը եղաւ կտրուկ մերժում։ Եւ մինչև 12 ապր. ժամը 2 Կարսը պարպուեց։ Հեռացան զօրքերը։ Հեռացաւ բնակչութիւնը — մօտ 20,000 մարդ՝ նախօրօք այրելով քաղաքի լաւագոյն շէնքերը։ Բերդում մնացին միայն բերդապետ գոր. Դէյեւը, կոմիսար Մ. Արզումանեանը, գնդ. Մորելը և սպայակոյտի ու վարչական հիմնարկութեանց սպաների ու պաշտօնէութեան մի մասը... բերդի գոյքերը փոխադրելու համար։ Զինենկելին միամտօրէն հաւատում էր,